

Ի. Կ Ռ Ի Լ Ո Վ,
Ա Ռ Ա Կ Ն Ե Ր





Ի. ԿՈՒԼՈՎ

ԱՌԱԿՆԵՐ


A $\frac{III}{2966}$

Պ Ե Տ Հ Ր Ա Տ


1988

ՅԵՐԵՎԱՆ









Հ Ա Մ Ե Ր Գ

Պիկ, պիկ,
Մեծ ծաղրածու մի կապիկ,
Եջը,
Այծը

Յե՛վ ել արջը ծուռ թաթիկ—
Ուզեցին տալ մի համերգ.
Իսկույն ընկան վոտ ու ձեռք,
Թե վնրտեղից, հազիվ-հազ
Գտան բերին նոտա, բաս,
Ալտա, յերկու հատ ջութակ,
Նստան հովտում, ծառի տակ՝
Գերեւ իրենց բուն ձիւղբով
Արար-աշխարհ բովանդակ:

Ճը՛զը, վը՛զը, խը՛փ, խփոց,
Կընտ, կընտ, կնտնտոց...
Բան դուրս չեկավ համերգից.
Պիկպիկն եղտեղ դուրս շարքից.
—Շ՛, մեր տղերք... Է, դադար,
Սա ի՞նչ գործ ե կեսկատար.

Յեկեք ճիշտ կարգ հաստատենք,
Այնպես նստենք՝ վիստովիստենք:
Միխն, ալտի դեմ բասով,
Միայն վիստ, վիստ հավասով
Յես ել յերկրորդ ջութակի.
Ճիշտը, առանց կատակի
Այս ե, պար-պար հավասար
Պար կրոնեն անտառ, սար:

Նրանք յեղան տեղափոխ,
Բայց համերգն ե անփոփոխ,
Նորը՝ դարձյալ
Հինն ե անցյալ:

Տղերք, հերիք...
Քիթից բերիք, —
Ե՛րբ գոաց. —
Քիչ սպասեք,
Ուղղեմ ձեռաց
Յես իմ գտած հնարքով. —
Պիտի նստենք մի շարքով:
Լսելով ե՞լ քեռուն՝
Անուն, անուն
Մեծի կարգով
Շարվան շարքով
Լուրջ... վայելուչ, —
Գործն ելի փուչ:
Խմբի մեջ կռիվ, վեճ,

Ծուլի, ծուլի.

Առաջվանից ել ավելի

Վեճը խիստ եր—

Ով վննց նստեր:

Պատահեց սոխակին

Ներկա լինել աղմուկին:

Նրանք չորսով

Աս ու խոսով

Յեկան աղաք,

Ասին՝ սոխակ,

Դու մեզ ների,

Քիչ համբերի,

Մեր ես գործը կարգի դիր

Մեր կասկածը փարատիր:

Նոտա ել կա և չորս գործիք ջսկ-տարբեր,

Միայն ասա ի՞նչպես նստենք, մեր ախպեր:

Սոխակը թե՛ ասեմ ճիշտ—

Վոր դուք դառնաք յերաժիշտ,

Ձեզ պետք է ձիրք, նուրբ ականջ—

Մի հասարակ, պարզ պահանջ:

Իսկ դուք, իմ բարեկամներ,

Հիմա և այլ անգամներ

Ինչպես ել վոր չնստեք,

Քաշեք, քսեք, քամստեք,

Դուք յերաժիշտ դարձող չեք:

ԳԱՅԼՆ ՈՒ ԿՌՈՒՆԿԸ

Վոր գայն ե ագահ—
Եդ մասին խոսք կամ.

Գայն ուտելիս
Վոսկորն ել ե կուլ տալիս:
Վայն յեկավ գայլի մեկին,
Վոսկորը կանգնեց բլին.
Քիչ եր մնում նա խեղդվեր,
Ես աշխարհից միշտ գաղթվեր:

Բայց բախտից մի կուունկ կը՛ռ...
Դեպի ծառը յեկավ թը՛ռ...
Նշաններով գայլը նրան
Խնդրեց, վոր գա փրկի իրան:

Կուունկն յեկավ: Քթիցը վիզ
Սուր կտուցը մի քանի թիզ.
Գայլի բիով վոր ներս խոթեց,
Վոսկորն հանեց, դեն շարտեց.
Հետո խնդրեց աշխատավարձ:

—Սա կատակ չի, ես ի՞նչ հարց,—
Նենդ գազանն ե մոնչում,
—Ա՛յ, ապերախտ կույր թռչուն,
Հիմանր, անմիտ,



Են հերիք չի, վոր քիթ ու ճիտ
Հիմար գլխով տեղովն ամբողջ,
Վողջ և առողջ
Կոկորդիցս դուրս քաշեցիր,
Վերջն ել, մի տես, ինչ հիշեցիր:
Չքվի... ել ինձ չհանդիպես...
Թե չե սեկց սև կկապես:

ԿԿՈՒՆ ՅԵՎ ԱՓԼՈՐԸ

—Չնաշխարհիկ
Իմ աքլորիկ,
Չայնդ զիլ-զիլ,
Վոսկի ծիլ-ծիլ.
Յերգերիդ մեջ
Բյուր յելևեջ:

—Կկո՛ւ քուրիկ,
Հուրիկ, բուրիկ,
Քո ձայնն ել ե
Լավ գեղգեղում,
Ծոր ե տալիս
Ու մղմղում:
Յերգ եմ լսել
Յես շատ ու քիչ,
Բայց չեմ տեսել
Քեզ պես յերգիչ:
—Իմ բնատուր
Վոսկեփետուր,

Կուզեմ

Լսեմ

Ձայնդ անսպառ,
Միշտ, անդադար:

— Պուճպուճուրիկ
Մի պուտ ջրիկ
Կկու քուրիկ,
Յերդվում եմ յես՝
Վոր լուում ես
Եսչնփ պուճհւր,
Սպասելով
Իմ աչքերը
Կտրում են ջուր.

Վհրտեղից ե
Քեզ եղպես ձայն,
Մաքուր, քնքուշ
Ու զնգնգան:
Դուք եղպես եք
Սմբողջ ցեղով.
Մի բուռ բան եք
Թեև տեղով,
Բայց ձեր յերգը
Շատ հաջողակ,
Չունի, չունի
Վոչ մի սոխակ:

—Գոհ եմ քեզնից,
Ջիվանն աքլոր,
Խղճով ասենք,
Դու միալար
Հավ ես յերգում
Դրախտահավից,
Թռչունների
Հավի լավից.
Վողջ աշխարհը
Խոսքիս վկա,
Քեզ պես յերգիչ,
Չկան, չկան:

Եղտեղ ծիտը,
Ծիտիկ-միտիկ,
Ասավ—Հլա
Սրանց մտիկ,
Ի՞նչ լավ գիտեն
Իրար յեղել,
Ասա՛ թողի՞ն
Պակաս տեղ ել:
Ե՛, լավ, հերիք
Իրար գովեք,
Աշխարհ գիտե,
Թե դուք ո՞վ եք,

ԿԱՊԻԿՆ ՈՒ ԱԿՆՈՑՆԵՐԸ

Ծերացել եր կապիկը,
Լավ չեր տեսնում պապիկը.
Բայց հասել եր աղանջին,
Թե արատ ե դա չնչին,
Պիտի գնել լոկ ակնոց:
Գնաց, ճարեց մի կապոց...
Ակնոցները, հինգ թե վեց,
Ե՛ս կողմ, Ե՛ն կողմ շուռ տվեց.
Մին դնում եր նա գլխին,
Մին ել պոչի մեջտեղին,
Մին լիզում եր թքոտում,
Մին ել սրբում, հոտմտում
Հն՝ փորձում եր, հն՝ փորձում...
Ակնոցները չեն գործում,
Են պսպղուն ապակին
Լույս չի տալիս պապիկին:
— Կորչեն, — գոռաց — ջուխտ ու կենտ...
Նն՝ յե հիմար, նն՝ յե խենթ,
Ով լսում ե շատ-շատին,
Մարդկանց հազար մի ստին:
Սրանց մասին,
Ինչ վոր ասին՝
Սո՛ւտ ե, սո՛ւտ,
Ես ապակին


Խավար աչքին
Ինչ ոգուտ:


Յե՛վ սրտնեղած ակնոցները
Ննպես շփեց չոր քարին,
Վոր ջուր կտրած ցալտունները
Կանաչ-կարմիր կապեցին:

ԳԱՅԼՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Գայլն անտառից
Փախավ գեղը.
—Նեղն եմ, նեղը,—
Ասավ կատվին,—
Ասլանն բալա,
Քո հոր պատվին
Մի ճար արա.
Մի տես հլա՛
Վորսորդ ու շուն
Թագի, թուլա
Միսս են կրծում,
Ինձ հալածում:
Ա՛յ կտրվի
Դրանց հոտը,
Մի մարդ ցույց տուր՝
Պահվեմ մոտը:

—Ա՛յ ցեղակից,—
Գոչեց կատուն,—





Գնա մտիք
Մարոյենց տուն,
Նա չափազանց
Բարի կին է:
— Յես ել գիտեմ,
Վոր անգին է,
Բայց վոր նրա
Հորթն եմ կերե՞լ:

— Բկիդ կանգներ,
Լավ չես արել.
Վոր եղպես է,
Այ ամաչկոտ,
Հովսեփի մոտ:

— Ե, ի՞նչ ասեմ,
Ես ամառը
Նրա գառը...

— Ո՞ւմ ասեմ ել,
Հն, մեր Զաքին:

— Ես գարնան ել
Նրա մաքին...

— Ո՞վ մնաց ել,
Հն, երեցը:

— Ես աշնանն ել
Նրա եծը...

— Այ դու ուտես

Ձուռի մեծը.
Քանիսն յեղավ...
Հինգը, վեցը...
Այ անամոթ,
Ի՞նչ յերեսով
Դու գեղ մտար,
Ի՞նչ ե, ուրիշ
Տեղ չգտար. .
Գյուղն հիմար ե,
Վոր թշնամուն
Պատսպարե:
Ով ինչ բրթե,
Են կխրթե:

ԿԱՊԻԿՆ ՈՒ ՀԱՅԵԼԻՆ

Իրեն տեսներով
Հայերու միջին,
Կապիկը վոտով
Մի բոթեց արջին:

—Քեռի, սրան տես,
Սա ո՞վ ե... գիտե՞ս:
Ես ի՞նչ ուեխ ե,
Կնճռոտ տրեխ ե,
Հրեշ, ցուցանք,
Պատի՛ժ, փորձանք:

Ինձ տեղն ու տեղ
 Կապանեյի,
 Թե քիչ սրան
 Յես նմանեյի,
 Բայց թե յես ել
 Ինչո՞ւ հետ եմ,
 Եղպես ցուցանք
 Քչին գիտեմ.
 Թվեմ գատ-գատ...
 Մերոնց մեջ շատ...
 — Քան թե թվես
 Ձերոնց գատ-գատ,
 Լավ չե՞ նայես,
 Խելո՞ք, վրադ.—
 Են գարշելուն
 Արջը ասավ.
 Բայց թե խոսքը
 Տեղ չհասավ:

ՓԻՂՆ ՈՒ ՇՆԻԿԸ

Փողոցներով փղին եյին ման ածում,
 Հավանորեն ցուցադրում—
 Հայտնի յե, վոր նորություն ե փիղը մեզ մոտ,—
 Ահա յեկել ու նայում են անգործ մարդիկ:
 Վորտեղից ուր մի շար շնիկ վազեց հերսոտ,
 Տեսավ փղին, հաջեց սաստիկ.



Դեռ ընկալի, դեն, վեր-վեր ցատկեց ու ճղճղաց,
Յե՛վ ուզում եր կռիվ անի բացե ի բաց:

«Եհ, խայտառակ մի անի քեզ,—

Ասաց մի շուն,—դու ի՞նչ ես վոր փղին հաղթես.
Տե՛ս, թե վոնց ես դու խռպոտում, բայց իր ճամփան

Անց ե կենում նա անխափան,

Քո հաջոցն ել չի նկատում»:

«Վահ, տնաշեն,— շնիկն ասաց,—

Յես ել եղքան չարչարվում եմ, ինձ կտրատում,
Վոր հենց եսպես—կռիվ չարած

Անուն հանեմ իբրև հայտնի մի կռվարար:

Թող շներն ել պատմեն իրար—

Այ, քեզ շնիկ, տեսեք հապա ինչ քաջ ե նա,
Վոր հաջում ե փղի վրա»:

ՃՊՈՒՌՆ ՈՒ ՄՐՋՅՈՒՆԸ

Թռի-վռի

Մի ճպուռ,

Վողջ ամառը

Շուռ ու մուռ,

Յերգեց, ճուռաց,

Ճոճուաց:


Մին ել, ըհը՛,

Ջմեռը,

Փռեց իրա

Թևերը.

Բացեց գորգը





Սպիտակ,
Դաշտերն առավ
Զյունի տակ:
Անցան պայծառ
Որերը,
Եւ վնրն ասեմ,
Եւ վնրը,
Յերբ ամեն մի
Թփի տակ
Թե սեղան կար,
Թե ոթյակ:
Յեկան որեր
Յրտաշունչ,
Ճպուռն ընկավ
Լուռ ու մունջ.
Քաղցած փորին
Եւ ինչ յերգ,
Ցուրտը տարավ
Վրա ու ձեռք:

Զընդը-զընդը
Դողալով,
Ծանր-ծանր
Սողալով
Նա մըջյունին.
Ասում եր.
— Գլխիդ մատաղ,
Սանամեր,

Մի ճար արա
Շունչ առնեմ,
Ցրտից, սովից
Զմեռնեմ.
Կերակրի՛,
Տաքացրո՛ւ,
Մինչև գարուն
Ապրեցրու՛ս
— Ի՞նչ խաբար ե,
Սանիկս,
Զարմանում եմ,
Զանիկս,
Զաշխատեցի՞ր
Ամառը,
Ասա՛, ի՞նչ եր
Պատճառը:

— Եղպես բանի,
Սանամեր,
Ել ժամանակ
Ո՞վ ուներ.
Են խոտերում
Բուրավետ
Յերգում եյինք
Մերոնց հետ...
— Ուրեմն դ՞ու՛...
— Այո՛, յես
Վողջ ամառը

Դեն ու դես
Յերգում եյի
Մշտապես:
— Յերգում եյիր...
Շատ բարի,
Այժմ ել բռնի
Վեր-վերի,
Քամին ծափ տա,
Դու պարի:

ԳՈՐՏՆ ՈՒ ԿՈՎԼԸ

Գորտը գորտին ասավ.
— Քեռի,
Խնդրեմ ես կողմ
Մի յետ դառի.
Տես սուք էլ եմ,
Փուքն առե՞լ եմ.
Ուղիղն ասա,
Կովին հասամ:

— Զուր ե, վերջ տուր,
Կովն ո՛ւր, դու ո՛ւր...

— Հիմի՞, քեռի,
Ուռամ իսկի:

— Շատ չեն գոռի,
Նույնն ես, սրսկի:



— Մի տես, քեռի:

— Նույնն ես, լռի.
Աշխարհ կանցնի,
Յեթե գորտը
Կովին հասնի:

— Ա՛յ, տես, քեռի:

— Թեկուզ մեռի,
Դու բաց աչքով
Ձեռ գառնա կով:

Գորտը ուռավ,
Փքվեց նորից,
Խիստ փուք առավ,
Ճաքեց զոռից:

Ով վոր փքվի,
Նա կչքվի:

ԱԳՌԱՎՆ ՈՒ ԱՂՎԵՍԸ

Բախտի բերմամբ,
Թե պատահմամբ,
Մի մեծ ագռավ
Մի գունդ պանիր
Դաշտում գտավ,
Կտուցն առավ,
Ծառին թառավ:

Ո՛ր, ի՛նչ պանիր...
Դեղին վոսկի...
Բայց դեռ շառած
Համը իսկի՛
Աղվեսն անցավ
Ծառի մոտով,
 Գերվեց,
 Երվեց
Պանրի հոտով:

Վազեց, գնաց
Բերնի ջուրը
Յեւ թուլացան
Կուռն ու ճուռը:
Են ժամանակ
Իրա ձևին,
Ծառի տակից
Աչքն ազոավին,
Հեզիկ, նազիկ,
Փափկամազիկ,
Բացեց լեզուն
Անուշ-մեղուշ,
Թափեց, չափեց
Շաքար ու նուշ:

— Ի՛նչքան լնփն ես,
Յես քո գերին,
Քո եղ սևիկ

Վառ աչքերին,
Նուրբ ծալքերով
Զույգ թևերին:

Մի դու մտիկ,
Եղպես բթիկ,
Եղպես ճտիկ.
Մախմուր ազին,
Խաս ու դուժաշ
Ատլանն հազին:
Գիտեմ, անշուշտ՝
Իմ քուրիկի
Զայնն ել կըլի
Հրեշտակի:

Յերգի, քուրիկ,
Մի ամաչի,
Իմ ուղածը
Մի մեծ բան չի:
Թե վոր չքնաղ
Եղ տեսքիդ հետ
Յերգելում ել
Յեղար վարպետ,
Ո՛ր, կղառնաս,
Իմ մաքրունի,
Թուշունների
Մայր թագունի:

Ազոավ ազին իրեն տված
Գովեստներից շշմած, ուռած,

Ագուավային
Բկովը մին,
Վոր չկուաց՝
Պանիրն ընկավ ծառիցը ցած,
Շողոքորթը ոխեց, գնաց:

ԿԱՏՈՒՆ ՈՒ ԽՈՂԱՐԱՐԸ

Մի գրագետ խոհարար
Ժամ, աղոթքի սիրահար,
Շատ հոգեվախ, խիղճն արթուն
Վագեց գնաց գինետուն՝
Իր սանահոր քելեխին.

Իսկ պահապան տուն-տեղին
Դրեց կատվին աչքաբաց
Յեվ շատ, շատ ել մկնատյաց:
Գնաց... յեկավ,

Իր աչքն ընկավ
Խոհանոցի հատակին,
Կարկանդակի փշրանքին,
Խանում, խաթուն
Տնապահ կատուն

Տակառի տակ
Ենպես տաք, տաք

Վճնց ե խժռում լավից լավին՝
Նորատապակ վառեկ հավին.

— Ա՛յ դու ծակաչք, այ դու շտես,
Եդ հավի տեղ մեծ ցավս ուտես,
Ա՛յ անպատկառ, թ՛հլ քո պատվին,—



Նախատում եր մարդը կատվին,
(Լսողն ով եր, հաջն համով եր)

Կար ժամանակ,

Վոր տան միակ

Կատուն եյիր ազնիվ ու հեզ.

Հիմա քեզ պես,

Այ բամբառակ,

Ձկա մեկը խաղք-խայտառակ.

Վայ թե քիթի հանես շեմքից,

Բա չէն ասի դուռ ու դրկից՝

Կատուն գող ե...

Նա վոսոխ ե...

Ինչպես գայլին չար ու անհագ

Պետք չի թողնել վոչխարանոց,

Ճիշտ այնպես ել՝ կատվին տան բակ,

Վոչ թե միայն տան խոհանոց:

Այդ գավգակը,

Ավագակը

Այս տեղերի,

Այս թաղերի

Աղտն ու կեղտն ե

Վարակ, ժանտախտ...

(Կատուն լսում, ուտում ե նաղտ)

Այստեղ մեր մեծ բարոյախոս

Ճարտասանը այնքան դար-փոս

Գցեց իրեն ու սրնգեց,

Մինչև կատուն կերավ, ծլկեց:

ԹԱԹՈՒԼԻ ՔԱԼԱՃՈՇԸ

«Հարևան ջան, հոգիդ սիրեսս

Մի քիչ ել կեր, մի ափսոսիր»:

«Հարևան ջան, շատ կուշտ եմ յես»:

«Մի ափսե ել դու ինձ լսիր:

Շատ համեղ ե քալածոշր, ինձ հավատա»:

«Յերեք ափսե կերա արդեն»:

— «Ինչ խոսք ե դա,

Թե ցանկություն ունես դու,

Անուշ արա, վերջացրո՛ւ:

Ինչ ել լամի ե քալածոշր. բա յերեսին

Տես սաթի պես յուղը դեղին...

Դե, սիրելիս, դու իմ խոսքը մի կոտրիր,

Յուզոտ տեղից դու ընտրիր—

Կեր մի քիչ ել Դե, ա՛յ կնիկ, պատվիր

հյուրին»:

Եսպես պատվում եր Թաթուլն Ոհանին,

Վոչ հանգիստ տալիս, վոչ ել ժամանակ

Իր հարևանին,

Իսկ նա քրտինք եր թափում շարունակ:

Ճարը կարած մի ափսե ել վերցրեց նա,

Ուժը լարեց անխնա,

Մաքրազարդեց:— «Ա՛յ դու կեցցես, դրացիս»:

Թաթուլն ասաց. — «Յես չեմ սիրում

դուող մարդկանց,

Դե կեր, խնդրեմ, մի ափսե ել, սիրելիս»:

Խեղճ Ոհանը ահաբեկված,

Թեև շատ եր քալաճոջը նա սիրում,
 Բայց դեռ չեղած մի եսպիսի նեղ տեղում,
 Գլխարկն ու գոտին սեղմեց իր կրծքին
 Յեվ անը սրտում փախավ եզ տանից
 Ու են որվանից
 Ել վոտք չդրեց Թաթուլի շեմքին:

ԱՔԼՈՐՆ ՈՒ ՄԱՐԳԱՐՏԻ ՀԱՏԻԿԸ

Աղբակույտը քշշելիս,
 Աքաղաղը մի մարգարտի հատիկ գտավ
 Ու ասաց. «Ես ինչ դառավ,
 Դատարկ բան ե, յես իմ հոգիս.
 Վոր հիմարն ե սրան եսքան գին տալի,
 Ճիշտ վոր ասեմ, գարու հատիկն ինձ ավելի
 Պետք պիտի գար՝ թեև ենքան չի շլացնի,
 Կկշտացնի:
 Տգետներն ել՝ ինչից գլուխ չեն հանում,
 Դատարկ բան են անվանում:

ԱՂՎԵՄՆ ՈՒ ԽԱՂՈՂԸ

Հին առակ ե—
 Աղվեսի դունչը խաղողին
 Չհասավ, ասավ խափ ե:
 Սոված աղվես...

Մտնի պարտեզ...
Տեսնի խաղող՝
Ո՛ր խ... արեկող
Հակինթ ճիթեր
Վերից կախ, կախ,
Ա՛յ թե կուտե՛ր.
Աչքն եր տեսնում,
Դունչ չեր հասնում,
Եստեղ պուպուզ
Ենտեղ կուկուզ,
Ես վազի տակ,
Են վազի մոտ,
Վերջն՝ աչքե տես,
Բերնե կարոտ.
Խիստ սրտնեղած
Յերավ գնաց
Պարտեզից դուրս,
Հետն ասելով
— Մի խոսքով
Լավ ե տեսքով...
Բայց խակ ե, կանաչ ե,
Ուտելու բան չե...
Բերան տաս՝
Ատամհարինք կստանաս:

ԳԱՅԼԱԶՈՒԿՆ ՈՒ ԿԱՏՈՒՆ

Փորձանք ե, յերբ ճաշ ե յեփում կոշկակարը,
Իսկ նրա տեղ կոշիկ կարում խոհարարը:

Ատամը մեծգայլաձուկը իր խելքով
 Մտքին դրեց զբաղվել արդեն կատվի արհեստով:
 Յես չգիտեմ, նա կատվին եր նախանձում,
 Թե ձուկ ուտելն եր իրեն խիստ ձանձրացնում,
 Միայն գիտեմ՝ խնդրեց կատվին,
 Վոր հետն իրեն վորսի տանի
 Ու պահեստում մկներ բռնի:
 «Բայց դու, հոգիս, ծանոթ ես եղ աշխատանքին,—
 Գայլաձկան կատուն ասաց,—
 Տես, սանամեր, քեզ խայտառակ շանես հանկարծ.
 Զուր չի ասել առածը հին՝
 «Ամեն մի գործ տուր վարպետին»:
 «Եհ, բանիդ կաց, սանահեր ջան, մո՛ւկ ես ասել
 Աքերին ենք մենք վորսացել»:
 «Իե, շատ բարի, գնանք», — ասաց: Դարան մտան:
 Կատուն կուշտ-կուշտ կերավ ենքան,
 Ապա գնաց, վոր սանամոր քեֆն իմանա:
 Գայլաձուկն ել վողջ եր հազիվ, բերանը բաց,
 Գետնին պառկած,
 Առնետներն ել կրծել եյին պոչը նրա:
 Տեսնելով, վոր գործը վեր ե նրա ուժից,
 Մանահերը խեղճին գցեց ջուրը նորից:
 Քո տեղն ե հենց, այ գայլաձուկ,
 Ես քեզ խրատ՝
 Սելոք լինես սրանից դեն
 Ու չգնաս մուկ վորսալու:



ԳՍՅԼԱԶՈՒԿԸ

Գանգատ տվին դատարանին, վոր լճակում
Գայլաձկան ձեռից չկա ճար ու պրծում,
Մեծ քանակով փաստեր կային:
Ինչպես հարկն եր՝ հանցավորին
Դատի բերին մի մեծ դաշտում,
Ներկայացրին դատողներին,
Վոր արածում եյին եղտեղ մոտիկ դաշտում:
Սակայն նրանց անունները հայտնի եյին:
Դրանք եյին՝ յերկու եջ,
Յերկու յաբու, և յերկու, թե յերեք այծ:
Իսկ վորպեսզի ամբողջ դատը լինի կարգին՝
Դատախազի գործը տվին մեր ազվեսին:
Բայց ամեն տեղ լուր կար համառ՝
Գայլաձուկը ձուկ ե բերում նրա համար:
Սակայն ճիշտ վոր անկեղծ եյին դատողները:
Են ել ասենք, վոր են ձկան արարքները
Չեր կարելի թագուն պահել ես անգամին:
Ել ճար չկար՝ հրաման տվին,
Վոր խայտառակ պատիժ տան են հանցավորին,—
Իբրև խրատ իսկույն հանել կախադան:
«Մեծապատիվ դատավորներ,— ազվեսն ասաց,—
Քիչ ե կախել: Յես մի պատիժ տամ նրան,
Վոր յերբեք մեզ մոտ չի տեսնված,
Յեվ վոր խրատ լինի սաստիկ՝
Պետք ե գետում նրան խեղդել»:
— «Շատ գեղեցիկ»
Բղավեցին դատողները, վորոշեցին,
Գայլաձկան գետ գցեցին:

ԿԱՐԱՊԸ, ԽԵՑԳԵՏԻՆԸ ՅԵՎ
ԳՍՅԼԱԶՈՒԿԸ

Ինչքան կուզեն՝ իրենց տանջեն,
Յերբ ընկերներն համերաշխ չեն
Ոգուտ շունեն բռնած գործից.

Այ, մի առակ կյանքի փորձից,
Թեև անցուկ,
Բայց վոչ մոռցուկ:

Մի կարապ, մի խեցգետին, մի գայլաձուկ
Բարձած սայլը տեղից քաշել ուզեցին
Յեւ յերեքով յեկան սայլին լծվեցին,

Ինչ են անում,
Ինչ չեն անում,

Սայլը տեղից հո չի շարժվում,—

Շատ թեթև ե բեռը թվում,

Բայց կարապը վեր ե թևում

Խեցգետինը քաշում ե յետ.

Գայլաձուկն ել հո դեպի գետ.

Ո՛վ ե արդար, ո՛վ մեղավոր,

Մենք չգատենք: Բանն այն ե, վոր

Մինչև այսօր

Թե սայլ, թե բեռ

Նույն տեղն են դեռ:

ՄՈՒԿՆ ՈՒ ԱՌՆԵՏԸ

«Հարևանս, լսել ես դու բարի համբավ,—
Ներս վազելով մուկը ասաց առնետին,—
Առյուծն, ասին, ճանկն ե գցել մեր կատվին.
Ես անզամին մեր հանգստի ժամը հասավ»:

«Հոգիս, շատ մի ուրախացիր,—

Առնետն ասաց հարևանին,—

Դատարկ հույսեր մի ունեցիր:

Թե վոր գործը հասնի ճանկին,

Առյուծը վողջ հո չի մնա.

Կատվից ուժեղ գազան չկա»:

Շատ եմ տեսել, դուք ել գիտեք ետպես մի բան:
Թե վախկոտը վախենում ե մեկից սաստիկ,
Կարծում ե, թե բոլոր մարդիկ
Իր աչքով են նայում նրան:

ԶՐԱՂԱՑՊԱՆԸ

Ձուրը ծակեց ջրադացի ամբարտակը,

Բայց սկզբում այնքան մեծ չեր եղ փորձանքը:

Պետք եր հոգ տանել

Ու անցքը փակել:

Բայց ինչ եք կարծում,

Մեր ջրադացպանը չի ել մտածում,

Ձուրն ել հոսում ե կարծես սափորից,

Ու քանդում անցքը, քանդում ե նորից:

«Ե՛յ ջրադացպան, դե ուչք դարձրու,



Գործի անցիր, խելքի յեկ դու»:
Զրաղացպանն ել ասում ե թե՛ «Եհ, տնաշեն,
Ինձ ծով ջրեր հարկավոր չեն,
Ինչքան գնա՛

Բավականին ջուր կմնա»:

Յեվ նա քնած ե, իսկ նրա բախտից
Զուրը հոսում ե կարծես կարասից:
Յեվ յեկավ ահա են փորձանքը մեծ՝
Քարը կանգ առավ, ջրաղացը կանգնեց,
Ու ջրաղացպանը վայ տվեց գլխին,
Ուղղում ե ջուրը հետ պահի կրկին.
Յեկավ ու նայեց քանդվածը նորից,
Տեսավ հավերը խմում են ջրից:

«Անպիտաններ, —բղավեց նա, —հավեր հիմար,
Առանց ձեզ ել ջուր. չեմ ճարում յես ինձ համար,
Յեղած ջուրն ել խմում եք ու պրծացնում»:
Ու խփում ե նրանց եղտեղ պառկեցնում: —
Իսկ գրանից վոչ մի ոգուտ այս մարդուն —
Առանց հավի, առանց ջրի գնաց տուն:

ՀԵՏԱՔՐՔԻՐԸ

«Բարաջողում: Վիրտեղ եյիր, բարեկամ»:
«Թանգարանում ման եմ յեկել յերեք ժամ»:
Ենքան զարմանք բաներ տեսա ենտեղ յես,
Վոր չեմ կարող, իսկապես,
Տեսածներս պատմել քեզ:
Հրաշքների դա մի տուն ե իսկական,

Են բոլորը կարծես խաղ ե բնության:
 Ել ի՛նչ ձևի գազաններ ու թռչուններ կան,
 Ի՛նչ թիթեռներ ու բզեզներ—
 Բլուճ, պիծակ ու մժեղներ...
 Մեկը կարծես զմրուխտ լինի, մյուսը՝ մարջան:
 Զատիկներ կան այնքան՝ մանրիկ,
 Գնդասեղի գլխից ել են նրանք փոքրիկ»:
 «Հը, փիղը վճնց եր, նրան ել տեսա՞ր,
 Յես կարծեմ՝ աչքիդ յերեկաց մի սար»:
 «Ենտեղ փիղ կա՞»:—«Բա չկա՞»:
 «Ներողությո՛ւն, փիղն աչքորվա չնկավ»:

ԳԱՅԼՆ ՈՒ ԳԱՌԸ

Շողին՝ մի գառ յեկավ առվից ջուր խմի,
 Բայց հանդիպեց փորձանքի՝
 Եդ մոտերքում սոված գայլը քաշ եր գալիս:
 Տեսավ գառին և ուզում եր վորս անի,
 Ապա գործին որինական ձև տալով՝
 Բղավեց նա—«Վճնց ես, լպիրը, հանդգնում
 Իմ ջուրը պարզ
 Պիղձ գնչովդ պղտորել,
 Մեջը խառնել տիղմ ու ավազ:
 Եդ վարմունքիդ համար ես,
 Գլուխդ կանեմ յերկու կես»:
 «Յեթե թույլ տա իմ տեր գայլը պայծառափայլ,
 Կհանդգնեմ զեկուցել, վոր մի հարյուր քայլ
 Դեպի ցած պայծառափայլությունից նորին՝

Կանգնած եմ յես ջրի ափին,
 Յե՛վ գուր ե նա բարեհաճում մեղադրել,
 Զուրն ի հարկե, չեմ ել կարող պղտորել»:
 «Յես, ուրեմն, սո՛ւտ եմ ասում.
 Ել եսպիսի հանդգնութ՛յուն կա՞ աշխարհում:
 Յես հիշում եմ, ա՛յ, անպիտան, են մյուս տարին
 Մի անգամ ել եստեղ դիպար դու իմ պատվին:
 Յես եղ բանը չեմ մոռացել, բարեկամ»:
 «Վողորմա ինձ, մի տարու ել դեռ չկամ»—
 Ասաց դառը:—«Դե, հիշում եմ, յեղբայրդ եր»:
 «Յեղբայր շունեմ»:
 «Դե խնամիրդ, քավորդ եր»
 Ու, մի խոսքով, մեկն ու մեկը քո ազգից:
 Հենց դուք լինեք, հովիվ լինի, կամ ել շուն,
 Միշտ իմ չարն եք կամենում,
 Յե՛վ կարենաք, դուք միշտ վնաս կտաք ինձ,
 եղ մեղքերը կպահանջեմ քեզանից»:
 «Իմ մեղքն ի՞նչ ե»:
 «Լռիր, լակոտ, հերիք լսեմ,
 Գործս պրծավ, վոր մեղքերդ մեկ-մեկ թվեմ.
 Քո մեղքն են ե, վոր սոված եմ, ա՛յ դու ցանցանո»:
 Ու խեղճ գառին նա քաշ տվեց տարավ անտառ...

ՄՏԱԽՈՍԸ

Հեռու տեղերից վերադառնալով
 Մի ազնվական (գուցե և իշխան).
 Բարեկամի հետ դաշտում ման գալով,
 Դլխի յեկածն եր պատմում պարծանքով.
 Ճիշտ խոսքերին ստեր խառնում անսահման:



«Ձե, — ասում եր, — ինչ վոր տեսա

Ել չեմ տեսնի յես իրոք,

Ինչքան խղճուկ յերկիր ե սա՛

Մեկ շատ ցուրտ ե, մեկ ել շոգ,

Մեկ ամպամած, մեկ արևոտ ու պայծառ:

Այ, իսկ ենտեղ մի դրախտ ե փառավոր,

Վոր հիշում եմ՝ հոգիս ցնծում ե կայտառ—

Վոչ քուրք ե պետք, վոչ ել մոմ ե հարկավոր,

Դար վոր անցնի՝ գիշերվա մութ չես տեսնի

Տարին բոլոր որն ե ժպտում մայիսի...

Ենտեղ վոչ վոք վոչ տնկում ե, վոչ ցանում,

Բայց վոր տեսնես՝ ինչ ե բուսնում ու հասնում.

Այ, Հումում, վարունգ տեսա, որինակ...

Տեր իմ աստված,

Մինչ հիմա ել աչքիս գեմն ե շարունակ:

Կհավատամ: Սարի չափ եր անկասկած»:

«Այ քեզ հրաշք», — ընկերն ասաց,—

Շատ հրաշքներ կան աշխարհում,

Բայց շատերը չեն նկատում:

Մենք ինքնիրա մոտենում ենք մի հրաշքի,

Վոր յես գիտեմ չի պատահել վոչ վոքի,

Կհաստատեմ վոր սուտ չի:

Այ, նայիր դու մեր ես գետի կամրջին,

Ուր տանում ե մեր ուղին.

Թեև տեսքով նա կամուրջ ե մի չնչին,

Բայց հրաշալի մի հատկություն նա ունի՝

Ստախոսը սիրտ չի անում, վոր անցնի—

Մինչև կեսը նա չհասած

Խորտակվում ե ու ընկնում ցած:
Իսկ ով ստեր չի ասում, վոր ուզենա
Թեկուզ կառքով կգնա»:
«Իսկ եդ գետը խորն ե արդյոք և ինչքան»:
«Իե, ծանծաղ չի նա ենքան»:
Տես, բարեկամ, ինչեր չկան աշխարհում:
Են Հոռմի վարունգն անշուշտ մեծ ե շատ,
Մի սարի չափ եյիր, կարծես, դու ասում»...
«Եհ, սար ել չե, բայց կլիներ մի տան չափ»:
«Իե դու արի ու հավատա...»

Ասենք, ճիշտ ե, հրաշք ե դա.
Իսկ կամոնը՞, վոր մենք կանցնենք վրայով,
Ստախոսը վրան կանգնել չի կարող:
Հենց ես գարուն յերկու գրող, դերձակը
Ջուրըն ընկան (գիտե ամբողջ քաղաքը):
Քո վարունգը տան մեծության,
Թե վոր ճիշտ ե, մի գարմանք ե իսկական»:
«Եհ, ենքան ել մեծ բան չի,
Իմացիր, վոր հրաշքներ կան շատ տարբեր՝
Մեր եստեղի պալատների նման չի:
Ի՞նչ տներ...»

Յերկու հոգի, են ել ստիպված, հազիվ մտնեն,
Ու վոչ նստեն, վոչ կանգնեն»:
«Եդպես լինի, բայց, ճիշտն ասած,
Քո վարունգը մի հրաշք ե շտեսնված,
Յերբ նրա մեջ տեղ են գտնում յերկուսով:
Բայց զբաղվենք կամուրջով»

Դեռ մի հինգ քայլ ստախոսը առաջ շանցած
Ընկնում է ցած:

Քո Հոռմի են վարունգը, վոր ասիր»...
Ստախոսը խոսքը կտրեց—«Դե, լսիր՝
Լավ կլինի եդ կամըջից ձեռ վերցնենք
Մնցնելու տեղ վորոնենք»:

ՍԱՐՅԱԿԸ

Փոքրուց ինչ վոր սարյակիկ,
Սովորել եր յերգել վորպես դեղձանիկ,
Դեղձանիկ էլ ծնվել եր հենց ինքը, կարծես,
Զվարճացնում եր վողջ անտառը ձայնով պես-պես,
Յեվ բուրբը գովում էյին սարյակին:
Ես վիճակը շատ շատերին բախտ կթվար:
Բայց նա լսեց, վոր գովում են սոխակին
(Սարյակը շատ նախանձոտ եր դժբախտաբար).
Մտածում է—«Բարեկամներ, դուք դեռ կացեք,
Հիմա ել յես
Պիտի յերգեմ սոխակի պես»:
Յեվ, իսկապես, գլեց մի յերգ,
Ինչ վոր ուրիշ հանգով սակայն՝
Մեկ ճատում է, խուպոտում,
Մեկ մկկում ուլի նման,
Կլկլացնում կոկորդում
Կատվի նման մլավում,
Ու մի խոսքով
Նա իր յերգով

Փախցրեց բոլոր թռչուններին:
Ոգուտդ ինչ ե, անգին սարյակ,
Լավ ե յերգես հաջող, վորպես մի դեղձանիկ,
Քան վատ յերգես իբրև սոխակ:

ԳԱՅԼԸ ՇՆԱՆՈՑՈՒՄ

Գայլը մի մութ գիշերով
Մասնոտի քշվելով
Ընկավ վոչ թե վոչխարանոց,
Այլ շնանոց:

Հոտն առնելով չքոտի,
Շնանոցը թը՛ռ վոտի
Գայլ ու շներ կողք-կողքի,
Բակը փոխվեց դժոխքի:

Վոռնոց, հաջոց, գոչ, գոչյուն...
Պահակներն են զիլ կանչում.
— Տղերք, գո՛ղ... գող ե յեկել,
Գոմի դուռը շուտ փակել.
Զենք ու ճրանգ...

Կարկրտի պես ցած տեղացին
Թուր, հրացան, բիր ու կացին.
Տրանք... տրանք.
Վառվեց ճրագ...
Դուռը բացին.
Հին դրացին՝
Գայլն անառակ



Մուայ, մթին մեջքը պատին,
Մաղ-մուգ բիղ-բիղ,
Անկեռ-հաստ վիղ-
Ատամները կըճրտացնում
Յե՛վ աչքերով սարսափեցնում
Իրա չորս դին,

Շրջապատին:
Ա՛յ, ինչն է վատ—
Ինքը մի հատ,
Շները շատ:
Տեսնելով այդ՝

Խորամանկը,
Վոր փրկի կյանքը,
Բանակցության տուտը բացեց.
Յե՛վ այսպես նա խոսքն սկսեց.
— Յես յեկել եմ հաշտվելու, վոչ թե
կու՛յի,

Սուտ ասողի լեզուն լու՛յի.
Թշնամու դեմ իրար ձեռք տանք,
Հոտի համար մահ ու մեռ տանք:
Անցյալն է անց, անցուկ, մոռցուկ,
Յես թափելով անկեղծ արցունք՝
Ձեզ տալիս եմ գայլի յերդում,
Վոր յես... «Հերիք, ա՛յ հարևան,—
Գլխովորսպետն է խոսքն ընդհատում,—
Գլխիս կարգաս գայլ-շարական,
Ինչքան կուզես լեզու թափի,

կաստամանով*) ինձ չես խաբի:
Թե քո մազը նոր չալել է,
Իմն հո արդեն սիպտակել է.
Յես լավ գիտեմ գայլի բնույթ.
Յե՛վ ել ունեմ լավ սովորույթ.
Գայլի մորթին դեռ չմաշկած՝
Յես գայլի հետ չեմ հաշտված.
Ասաց...

Գայլի վրա շները բաց...

ԽՈՋՆ ՈՒ ԱԳՌԱՎԼԸ

Մի դարավոր կաղնու տակ
Խոզը ագահ ու անհագ
Ենքան կաղին զխտվեց,
Վոր ցած ընկավ ու փռվեց.
Ջարթնեց քնից ու տակից
Ծառը փորեց արմատից:
— Ի՞նչ ես անում, այ անգետ,—
Ագռափն ասավ վերևից.—
Խաղ ես անում ծառի հետ,
Կչորանա արևից:
— Չորանում ե՛՛ չորանա,
Ինձ ի՞նչ ոգուտ՝ զորանա.
Միայն կաղին ունենամ,
Ուտեմ, ուտեմ, գիրանամ:

*) Կաստաման—գայլի շարական:



—Այ ապերախտ կենդանի,
 Ով քեզ նման վիզ ունի՝
 Իր կույր աչքով չի տեսնի,
 Վոր կաղինը հյուսթալի
 Լոկ այս ծառն է ձեզ տալի.—
 Ագռափն ասավ խոզուկին՝
 Են կախ գլուխ կուզիկին:

ՆԱՊԱՍՏԱԿԸ ՎՈՐՍԻՆ

Մի մեծ խմբով հավաքվեցին
 Գազանները՝ արջ վորսացին,
 Ու, խեղդելով բաց դաշտում,
 Իրար միջև բաժանում են են արջին:
 Ամեն մեկը իր համար է աշխատում,
 Նապաստակն էլ ձեռք է գցում ականջին:
 «Ե՛յ դու շղիկ, —ասին նրան,—
 Եդ վորտեղից մեջ ընկար,
 Գու մեր վորսին յե՛րբ յեղար»:
 Նապաստակը պատասխանեց.—«Ե, ախպեր ջան,
 Բա անտառում յես չե՛յի, վոր վախեցրի
 Ու դեպի դաշտ ուղիղ ձեր դեմ փախցրի
 Ես խեղճ արջին»:
 Նապաստակի պարծենալը պարզ էր ենքան,
 Բայց դրանով նրանք ենպես զվարճացան,
 Վոր մի կտոր են ականջից նրան տվին:


ԱՐԿՂԻԿԸ

Պատահում ե յերբեմն մեզ
Իմաստություն և աշխատանք տեսնել ենտեղ,
Ուր պետք ե, վոր գլխի ընկնել
Յեզ ուղղակի գործի անցնել:

Վարպետի մտախց բերին մի արկղիկ:
Իր տեսքով արկղիկն աչքի յեր ընկնում:
Նայում են բոլորն արկղին գեղեցիկ:
Հնարագետ մի մարդ սենյակ ե մտնում,
Նայում արկղիկին:— «Գաղտնիք ունի դա,—
Ստում ե իսկույն,— կողպեք ել չկա,
Իսկ յես կբացեմ, յես կասկած չունեմ,
Գաղտնիքը գիտեմ, իսկույն բաց կանեմ:
Հնարքներ շատ են ձեռքիցս գալիս»:
Ու արկղիկը վերցրեց ահա,
Շուռ ե տալիս չորս կողմի վրա,
Զոռ ե տալիս իրեն խելքին,
Մասը դնում մեկ ճարմանդին, մեկ ել մեխին:
Մարդիկ նայում աչքի տակով
Գլուխները թափ են տալիս կասկածանքով,
Ու փսփսում, ծիծաղում են քթի տակին,
Յեզ չորս կողմից հսն դիպչում ե իր ականջին՝
«Ձեղավ, դա չի»: Խեղճը դուրս ե գալիս կաշուց.
Քրտնեց, քրտնեց և վերջապես, հոգնեց արդեն,
Ու արկղիկից նա ձեռ քաշեց:
Իսկ արկղիկը բացվում եր հենց իրեն-իրեն:

ԱՂՎԵՍԸ

Յուրտ ձմռանը, գյուղին մոտիկ, լուսածեղին,
Մեր աղվեսը ջուր եր խմում սառցածակից:
Մինչ այդ—բախտ եր, թե սխալանք (բանն եղ հո չի)—
Աղվես ապոր պոչի ծայրից
Մի քիչ թրջվեց, կպավ սառցին:
Կարելի յեր գործը ուղղել, ցավը մեծ չեր,
Մի քիչ ուժեղ ձգել պետք եր
Ու կորցնել մեկ կամ յերկու տասնյակ մագեր,
Ու մինչ մարդիկ վեր կկենան,
Շուտ հավաքել փասա-փուսան:
Բայց ես պոչը վննց փչացնես՝ բրդոտ մի պոչ,
Վոսկեվորիկ ու լայնափննջ:
Պետք ե սպասել՝ ժողովուրդը դեռ կքնի—
Մինչ այդ գուցե գուր կընկնի,
Պոչն ել ծակից դուրս կպրծնի:
Սպասեց, սպասեց, պոչն ավելի սառչում ե դեռ:
Տեսավ, ըհր՝ որը բացվեց,
Մարդիկ յելան, ու լավում են հրեն ձայներ...
Խեղճ աղվեսի լեղին պատուեց,
Մեկ ընկավ դես, մեկ ընկավ դեն,
Սառցածակից չի կարենում պոկվել արդեն:
Նրա բախտից գայլն ե գալիս:
«Իմ բարեկամ, սանահերս, այ սիրելիս,—




Կանչեց,—փրկիր հասել ե իմ վերջն ահա»:
 Սանահերը կանգ առավ
 Ու աղվեսի փրկությունը հանձն առավ:
 Դրա համար մի պարզ միջոց ուներ նա,
 Իսպառ կրծեց նրա պոչը արմատից,
 Ու առանց պոչ մեր հիմարը վազեց, գնաց,
 Յեվ ուրախ եր, վոր իր մորթին իրեն մնաց:
 Ինձ թվում ե միտքը պարզ ե ես առակի,
 Թե չափսոսեր միքիչ պոկել մազն իր պոչի՝
 Իր պոչից ել չեր զրկվի:

ՏՐԻՇԿԱՅԻ ԲԱՃԿՈՆԸ

Տրիշկայի բաճկոնն արմունկներում կտրտվեց,
 Ել շատ յերկար նա միտք չարեց: Ասեղ վերցրեց
 Ու թևքերից քառորդի չափ կտրեց, կարեց
 Արմունկներին: Բաճկոնն ելի նույնն ե, կարծե...
 Ձեռքերն, ասենք, մի քառորդով մերկ մնացին:
 Դե ինչ կա վոր, լինի եսպես:
 Բայց բոլորը ձեռ են առնում մեր Տրիշկային:
 Տրիշկան ասաց.—«Հիմար չեմ յես,
 Ես ցավին ել կանեմ մի ճար»:
 Ու թևքերը նախկինից ել կլնեն յերկար»:
 Բաս, Տրիշկան հո պակաս մարդ չի՝
 Կտրեց քղանցքն ու փեշերը
 Ու նրանցով յերկարացրեց իր թևքերը:
 Յեվ ուրախ ե Տրիշկան սաստիկ,

Վոր ենպիսի մի բաճկոն է հագնում հպարտ,
Վորի հանդեպ կազմոլներն*) եւ յերկար են շատ:
Հենց նույն ձևով, յերբեմնակի տեսնում եմ յես՝
Պարոններ կան, խճրճում են գործերն եսպես,
Հետո սարքում
Ու Տրիշկայի բաճկոնով են միշտ զբոսնում:

*) Կամզուկ—կարճ վերնագգեստ:



Ց Ա Ն Կ

-	1. Համերգ—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	5
+	2. Գայլն ու կոտնակը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	8
+	3. Կիւն և աքլորը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	10
+	4. Կապիկն ու ակնոցները—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	13
+	5. Գայլն ու կատուն—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	14
+	6. Կապիկն ու հայելին—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	16
+	7. Փիղն ու շնիկը—փոխ. <i>Կ. Բ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ</i>	17
+	8. Ճպուռն ու մրջյունը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	18
+	9. Գորտն ու կովը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	21
+	10. Ագռառն ու ազիկը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	23
+	11. Կատուն ու խոհարարը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	36
+	12. Թաթուլի բալածուղը— <i>Թ. Բ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ</i>	29
-	13. Աքլորն ու մարգարտի հատիկը—	30
+	14. Ազիկն ու խաղողը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	30
-	15. Գայլածուկն ու կատուն—	31
-	16. Գայլածուկը—	34
+	17. Կարապը, խեցեղետինը և գայլածուկը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	35
+	18. Մուկն ու անետը—	36
-	19. Զրազայտանը—	36
+	20. Հետաքրքիրը—	38
+	21. Գայլն ու գառը—	39
+	22. Սաախոսը—	40
-	23. Սարյակը—	43
-	24. Գայլը շնանոցում—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	44
-	25. Խոզն ու ագռառը—փոխ. ԽՆԿԻ ԿԱԿԵՐ	46
+	26. Նապաստակը փորսի—	84
-	27. Արկիկը—	49
-	28. Ազիկը—	50
-	29. Տրիշկայի բաճկոնը	52



Կազմեց Ս. Հայրլյան
Տեխ. խմբագրեր՝ Ստ. Ալթունյան
Սրբագրեց՝ Ք. Հովակիմյան
Կոնտրոլ սրբագրեց՝ Ս. Ծանբաղյան

Դրամաշիտային լիազոր՝ Դ - 3603. Հրատ. 4507.

Պատկեր 191. Տիրում 3000.

Թուղթ 62 x 94. Տպագրական 3 1/2 մամ.

Մեկ մամուլում 24768 նշան.

Հեղինակային 1 3/4 մամ.

Հանձնված և արագրության 20 փետրվարի 1938 թ.

Ստորագրված և տպագրության 28 մարտի 1938 թ.

Գինը 3 ա. 50 կ.

Կաղա՞լը — 50 կ.

Պետհրատի 1 տպարան, Յերևան, Լենինի 65

File 1266
8/2/61
— 12/10/61

ՀԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0068120

ԳԻՆԸ 3 Ռ. 50 Կ.
ԿԱԶՄԸ 50 Կ.

ԱՄ
2966

И. КРЫЛОВ
БАСНИ

Гиз Арм. ССР, Ереван, 1988 г.